

Տպուած 500 օրինակները բարերախտարար փոխադրուած էին Պատրիարքարան՝ ուրկէ չեն կրնար գրանել . սակայն տպագրիչը կը դատապարտուի բանտի ուր 2 ամիս կը մնայ , որովհետեւ Պատրիարք Հօր զինուամենք ո՛չ մէկ արդիւնք ունեցած էին : Աւելի՛ն կար : Տպարաններու վրայ նսկողութիւն կատարող նաւատափոխ Հագգը անուն անձ մը (որ փոքրիկ գումարներու փոխարէն՝ արկածելոց բանկագին ծառայութիւններ մատուցանելու յօտար էր) , բանա կ'ապցելէ և բարուրիւնը կ'ունենայ Գափաֆեանի իմաց տալու թէ իր **Ներգարանը** Կարին բուններ և Հայ-Հռոմեականի մը բարգմանել տալով Պօլիս «ժուրնալ» ըրեր են : Յովսէփ յանկարծակիի կու գայ՝ միտք թերելով տարարախտ Տեոտեստան որ զնոյանի մէջ փջած էր նոզին՝ նամանուն գիրք մը նրատարակած ըլլալուն : Իսկոյն իր փաստարաններուն լուր ընելով՝ նախորդ ամբաստանութեան խնդիրին մղում տրուիլը կ'աղերսէ , և սուգանքի , կրճօնի , տպարանի փակման , ամէն բանի նամակերպելով՝ իջէ օրէն բանտէն դուրս ելլելուն , դժուարէ փախչողի մը պէս կը մեկնի Արևք , մինչ իր բացակայութեան՝ տուն , գրափաճառանոց ու տպարան՝ ամենուրեք խուզարկութիւններ կատարուած էին : 2 տարի Յունաստան մնալ նարկ կ'ըլլայ՝ ծանօթանալով փախըստական Թուրքերու , ամենքն ալ ազատամիտ սպաններ , բարձրաստիճան անձեր և պաշտական աշխիւններ ու դայեակ որոնք գաղտագողի մեկնած էին անդարձ՝ Մայր-Հայրենիքէն , Կարմիր Սուլթանին հետապնդման պատճառաւ : Մինչ այս մինչ այն , Պօլսէն փտանելի անձէ նամակ կ'ստանայ աւետող՝ թէ իր ծանր պատիժը 45 ոսկի տուգանքի՛ չնրաճուած ըլլալով կրնայ այլ եւս ազատ մուտք գործել ի Թուրքիա : Դարձին՝ Գափաֆեան երեսի վրայ ձգուած և փճացումի վտանգին տակ կը գտնէ գործ ու գործատուն , զորս վերականգնացունելու իր ջանքերն ապարդիւն կը մնան , նակառակ գրափաճառանոց և տպարան կրկին բանալուն , մանաւանդ որ ատենը մէջ մը Ռափիկանուրէնէն կանչուելու երկիւղն ալ կար գործին մէջ , որ իր եռանդը կը կասեցունէր ու կեանքը կ'անհամոքսէր : Զախորդութեանց այդ օրերուն՝ նախկին փախուն վիճակին տիրանալու սին յոյսով , «ալեվրա» խաղալը չուշանար վերջին հարուածը տալու իր գործառնութեանց : 1892 Յունվարին կ'առիպուի քաշուիլ գործէ , Զարմաքճըլբաթի իր գրատունը՝ Պ. Պալենցի , իսկ տպարանն ու կազմատունը փոխանցելով իր պաշտօնեաններէն Մինրան Յ. Փափազեանի : Հայկ. Կոտորածին , քաղաքական նորիզոնը մուր տեսնելով առաւել քան երբեք . Գափաֆեան կը խառնուի գաղթականութեան մեծ հոսանքին որ կես առ կես ցիր ու ցան ըրա Պօլսոյ Հայութիւնը : Ընտանեօք կը նատառուի Պուլկարիա , բաւական տարի Ռազկրատ , վերջին ատեններս ալ Շումլու՝ ուր կ'ապրի ցարդ , դառնագին ծերութեան մը մէջ : — 1863-88 բուռականներուն իր տպած գիրքերը եղած են՝ ժամանակագրական կարգաւ՝ Բաղտնիք բնութեան , Պոնէո. միլիոնաւորը , Հռոմիայ քաննադատութեան , Տօնացոյց , Բաղտնիք ամուսնութեան , Բաժուր , Առձեռն գրագիտութեան , Յաջորդութիւն պատրիարքացն երուսաղէմի , Լէլլա իլէ մէճնուն , Ազգ. լսարան , Պատմութիւն առն և կնոջ , Երեք ճառք դամբանականք , Ստուերք նայկականք , Քերթուածք նուիրականք , Բնաստապիրութիւն ամուսնութեան , Գործք առաքելոց , Օրացոյց ժողովրդ. (նաեւ պարզ օրացոյցք) , Սիրաք և Սամուէլ , Միութիւն Հայոց , Աշրդ Կարիպ , Աշխ. նայ լեզուն , Քննական Պատմ. Հայոց , Գերեզմանք , Պատասխան ընդդէմ յայտարար ճշմ. , Շինեմք մեր գերեզմանատումը , Գիսաւ օրք , ճաշակ ոսկեղէն դպրութեան , Աւետարան ևն. , ևն. : — Երկար տարիներ նրատարակիչը եղած Ա. Մար. Գարագաշեանի (նաեւ քանի մը ծանօթ ուսուցիչներու) գանագան **դասագրեանց** — շատը բազմաթիւ տպագրութիւններու նասած , — որոնք ազգ. դպրոցները ողողելով՝ նեղինակներէն աւելի տպագրիչը նպատարած են :



### 1059. Ճանիկ Արամեան + —

Հռչակաւոր վիճագրող , փոքագրիչ , գրանուիչ , ծառերու հնարիչ , զպագրիչ և զպարսմանութեան արտեսագէտք որ միամտամանակ գրող ալ էր : — Արամեանի խոստովանութիւնը հայ ծառերու մասին :

Ծնած է 1820 ին՝ Իզմիր : Համեստ ծնողքի գաւակ , տղայ նասակէն Պօլիս եկած և դերձակութեամբ պարապած է : Մէկ կողմէ իր արհեստին աշխատելով , նետամուտ կ'ըլլայ նաեւ ինքնագարգացման և նայերներ կ'առաջացունէ . **ասեմ մըն ալ գրաւորութեամբ**